




ԱԶԳ. ԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԵՐԿՕՐԵԱՅ ԱՆԿԱՆ ՀԱՅԱԹԵՐԹ

لیسان * جريدة ارمنية سياسية ادبية اقتصادية وصورة

Publication information for 'LIPANAN' (JOURNAL ARMÉNIEN) including address, price, and subscription details.

ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹ. ԱԹՈՐԸ

Առաջին ազատականներ, հայկական եկեղեցւոյ լայնախոհ ոգիէն առաջնորդուած, կը սիրեն հաւատալ թէ վերոյիշեալ համահրաւէրը վերջ պիտի տայ յարաբերական խտրութիւնը...

Կիլիկիոյ Հայրապետը էջմիածնի հայրապետի ընտրութեան և փոխադարձաբար էջմիածնի հայրապետը Կիլիկիոյ հայրապետի ընտրութեան պիտի նախագահեն վայելելով ընտրողի և ընտրուողի իրաւունք: Եւ շատ հաւանական է որ հոգեւոյն Տ. Գեորգի Ս. Կաթողիկոս Սուրենեանց, այս լայնախոհ ոգիէն աւարուած, իր եկեղեցական կանոնադրութեան մէջ ընդունած է օրինական տրամադրութիւն մը ըստ որում էջմիածնի եկեղեցական համագումարին պիտի նախագահէ Կիլիկիոյ Կաթողիկոսը երբ էջմիածին գուրկ կը մտնայ հայրապետէ:

Անկասկած ենք որ ժամանակակից երեք սրբազան հայրապետներն ալ, Տ. Գեորգ Ս. Կաթողիկոս Սուրենեանց, Տ. Սահակ Կաթ. Խաչապետ և Տ. Եղիշէ Արք. Դուրեան օգտուած էին և են, նոյն լայնախոհ ոգիով: Ասոնցմէ երկուքը, թէև յաւիտենապէս հեռացած մեզմէ, սակայն գործնականապէս ցոյց տուած են իրենց ազատախոհ ոգին, առաջինը իր համահրաւէր օրինական տրամադրութեան շնորհիւ իսկ երկրորդը Կիլիկիոյ վտարանդի Աթոռին փոխանցուած վանքապատկան կալուածներով ու անոր հանգէպ ցոյց տրուած անվերապահ յարգանքով:

Իբրև մօտէն ծանօթ, կարող ենք յայտնել թէ Կիլիկիոյ աղեղնաղ հայրապետը, աւելի լայն չափով մը, օգտուած է իր ողբացեալ սքեմակիցներու լայնախոհ ոգիով և պիտի ջանայ յարգել կատարուած համահրաւէրը եղբայրական, եթէ իր յառաջացեալ տարիքի բերումով չզրկուի այս անսոս գիւտ պատեհութիւնէն:

(Վերջ) Թ. ՊԱԼԵԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱՅՈՒԳԻՉ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

Քաղաքակիրթ Եւրոպա, առհնէ մ'իվեր մտահոգուած էր Դեղին տազնապով, ինչ որ մասամբ իրականացած կարելի է համարել անծայրածիր Զինաստանը տակնուվրայ ընող քաղաքային արևնոս կոխներու շնորհիւ, որոնք կը շարունակուին մէկ տարիէ ի վեր և որոնց մեծ թափ մը տալ սկսած է Կարմիր տազնապը, իր տառ և երեքամեայ գոյութեամբ Եւրոպան ահ ու դողի մատնող քաղաքական մեծ երեւոյթը:

Շատ հաւանական է որ Դեղին տազնապը ցարդ իրմէ ակնկալուած ուրախով պիտի ուրախէր պարտասած Եւրոպան. եթէ անգլիական պողպատեայ դիւանագիտութիւնը չյաջողէր Ազգ. Դաշնակցութեան չղթայով կաշկանդել ձաթընը, Դեղին տազնապի մեծագոյն ռազմիկներն:

Դեղին տազնապը Զինաստանի քաղաքային կոխներով սահմանափակելու անգլիական քաղաքականութիւնը, չորս հինգ ամիսներէ ի վեր հարկադրուած է պայքարել Հնդկաստանի քաղաքային ըմբոստութեան դէմ, որ Դեղին տազնապի մէկ տարբեր և աւելի վտանգաւոր ճիւղը ըլլալու կոչուած է:

Յազթականներու կողմէ ճնշուած ազգերու հանգէպ կատարուած և նախապէս փափաքուած չափով չիրազդուած յանձնառութիւններ ստեղծած են զաղթային տազնապներ: Մեծն Բրիտանիա իր ներքին բազմառեւոյտ տազնապներու հետ հարկադրուած է պայքարել եգիպտական, ազգեւորական, իրաքեան, հիւսան, նէճաւոն, անգլիոյրքանական, տազնապներով, Հնդկաստան և Ալժէր-Մարոքեան խրատումներ մտահոգած են մեծ պատերազմի աւերներէն կիսովին ազատուած Ֆրանսան:

Նախապատերազմեան շահաստան երկիրներ, որոնք գաղթիւղափոխի կաշկանդիչ չղթայով, պարզ գաղթափայրերու երեւոյթ առած էին, զինապաղարէն ի վեր թօթափած են իրենց վրայէն օտար ազգեցեւորներն ու վրձնած ապրիլ բողոքովին ազատ: Պարսկաստան, Թուրքիա, Աֆղանիստան, երբեմն ազգեցեւորական շրջանակներու կամ գրաւման վտանգին ենթակայ, այժմ ազատ են ամէն կաշկանդումէ:

Նոյն երեւոյթները կը տիրեն Եւրոպական ցամաքի վրայ ուր Ֆրանսական սուլններով ազատագրուած Լեհաստան, գաշնադրութիւններ կ'ստորադրէ իր ազատարարին հետ. յաղթական համաձայնութեան շնորհիւ հողային լայն իրաւունքներու տիրացող Յունաստան իր գաւազներուն կ'արգիլէ օտար նախակրթարաններու մէջ նախակրթարանական ուսում ստանալու ազատութիւնը:

Դերման սուլններու առջև ջախջախուած Բուլմանիա, Զինաստանի մեծ կողմակիցութեան հանգամանքով, կը կերտէ եւրոպական փոքր համաձայնութիւնը զինքը և իր համաձայնակիցները ազատագրող մեծ համաձայնութեան գէմ ծառանալու զգուշացումներով:

ԿՍՄԻԹՆԵՐ

Ա.ԿԱՆՁԸ ԽՕՍԻ ՄԵՐ ՈՒՆԵԻՈՐՆԵՐՈՒՆ

Թերթերը գտնի են, հետեւաբար աշխարհի զանազան մասերուն մէջ ցրուած հայեր, անհրաժեշտ է, տեղեկացան թէ, Կիլիկիոյ հարազատներէն Տիար Ներսէս Կիլիկիեան, իր վաղամեծիկ հարազատին, Պողոսի ի յիշատակ Հալէպի մէջ կառուցած է ՊՕԴԱՍ ԿԻԼԻԿԻԵԱՆ վարժարանը ու անոր գոյութիւնը յաւերժացուցած նւթապէս, ինչ որ էականն է:

Ազգային բարեբարութեան մեծ բրօքէսէօրը, թէև յաւիտենապէս բաժնուած մեղմէ, սակայն հիմնադիրը եղած է ոչ միայն Հ. Բ. Ը. Միւրթեան այլ նաև ՀԱՅ ԲԱՐԵՐԱՐՈՒԹԻԱՆ:

Ու այս մարդասիրական գործի հետեւողներու թիւը կ'երկի թէ օրէ օր պիտի աճի:

Մեր մէջ բարեբարութեան նախապատրաստական գաւազները կը կազմէ եկեղեցիի կամ վարժարանի շինութիւնը ու հետզհետէ կատարելագործուելով կը հասնի մինչև բարձրագոյն գաւազները. այս հաշուով բարեբարութեան վարժարանի շէնքերը անաւարտ են Ս. Մուրատեան, Ռ. Ղարաման, Լազարեաններ, Թ. Ամիրայ Պէզճեան, Ստանաբեան, Կ. Միլլեոնեան, հանգուցեալ Պողոս փաշա Նուպար:

Իսկ, բարեբաղգաբար թէ գրեթէ բաղգաբար, աւելի ստուարութիւն է նախապատրաստական կարգի հետեւ (Շար. Բ. էջ Բ. սիւնակի տակ)

Կը կերտուի Պրիւս-Քէլլի հակապատերազմեան ուխտը, կ'սկսի յաւերժանալ Պրիւսեան Համեղոյական Դաշնակցութեան ծրագիրը, կ'ուժեղանայ Ազգերու Դաշնակցութիւնը. ու այս ամէնը քաղաքական մտահոգիչ երեւոյթներու առջև պատուարներ քաշելու կանխահոգութեամբ:

Ազատագրութեան սանձառձակ ոգին չղթայալերծած է օտար ազգեցեւորներէն ենթարկուած բոլոր մեծ ու փոքր ազգերը. իսկ հակապատերազմեան համաշխարհային բազմաթիւ ջլատած է իրերամարտ կառավարութեանց ռազմական ոգին:

Սյո Խաւար կացութեան առջև ամենէն աւելի մտահոգուողն է Եւրոպան որ իր ճարտարաբանական, ճարտարագրական և քաղաքակրթական զանազան մարդերուն համար, հարկադրուած է հետապնդել գաղթային կամ արտաերկրային քաղաքականութիւն:

Յետ պատերազմեան առաջնակալ երեւոյթներ կ'սպառնան Եւրոպայի զաղթային կամ արտաերկրային աշխարհակալական ձգտումներուն այս իսկ պատճառաւ անհրաժեշտ կը նկատուի համեւրոպեան գաշնակցութիւնը յամենայն դէպս Ազգերու Դաշնակցութիւնը փոխանակելու համար եւրոպական գաշնակցութեամբ ու այս պարզապէս զեղին, կարմիր, ազատագրական կամ այլ տազնապներու դէմ միացեալ ճակատ և սպանով պայքար մը կարենալ կազմելու կանխահոգութեամբ:

Քաղաքական հորիւնը մթազնոյ այս մտահոգիչ երեւոյթներէն դատելով, ինչպէս ի մէջ այլոց անգլիական կառավարութեան խորհրդական Պր. Պրենս ալ կը կանխատեսէ, յառաջիկայ 1935 տարին պիտի ըլլայ 1914 տարուայ կրկնութիւնը, տիեզերքը բոցավառելով նոր և հաւանաբար աւելի ահաւոր պատերազմի արհաւիրքներով:

Յետ պատերազմեան կատարուած բոլոր միջազգային ձեռնարկներ, խորհրդատուութիւն, ազգաց կամ համեւրոպեան գաշնակցութիւն, նաւային զէնքիկցութիւն, հակապատերազմեան ուխտ. հոգաւորական վարչաձեռնարկներով վրայ չըջան ընող նոր ու տհաճ ուղեւորական մը դէմ անընդհատ խուլ պայքարներն են:

Թ. ՊԱԼԵԱՆ

ՊԵՅՐՈՒԹԱՅԱՅ ԿԵԱՆՔ

Չանաղան կիւրաններէ ստացուած նամակներէ կը տեղեկանանք թէ յառաջիկայ շրջանի ուսուցչական ընտրութեանց մէջ կուսակցական կամ մայականութիւններ կը տիրապետեն կուսակցական հակամարտութիւնը մեծ թափ ստացած է կրթական յարկերէ ներս, պաշտօնի կոչուածներէն շատեր միեւնոյն չի նկատուածներու նպատակներէն են. կան կրթական մշակներ, որոնք հակառակ իրենց արդիւնաւոր և տեւական ծառայութեան հրաւեր անգամ չեն ստացած. ոմանց ալ հրաւեր եղած է առանց խնդրանքի: Յաջորդել կ'ուզէր զառնանք այս խնդրի շուրջ:

ՀԱԿԱՀԱՅ ԲՐՈՐԱԿԱՆՏ

Ատենէ մ'իջեր հրապարակ նետուած է հակահայ բրգապանտ մը Համառոնի Դաշնակ համաժողովը մասի փաթեթից եղած է: Ինչո՞ւ պատկան ազգային մարմիններ ու հոգ, պետեր չեն հերքեր հիւս. Սուրբիոյ Հայկ. Օճախառնասպիւրկարք մը երկրագործ հայ ընտանիքներու հոն հաստատման ծրագիրը ինչո՞ւ Հայկական Օճախի ընտյթ կ'ստանայ ու անոնք լուր կը մնան:

ԱԶԳ. ՏՈՒՐԻՔ

Տնտեսական խորհուրդը, ցաւաւալի է ըսել, չէ յաջողած հաստատել ազգ. Տուրքի Դրութիւնը: Առաջնորդարանի Հասոյթները անհամապատասխան են իր ճոխ պիտէին: Ազգ. Մարմիններ, իրենց օրինական նիստերը կը կատարեն սակայն ազգ. մեքենայի սնիւր չ'զառնար: Վարժարաններու և ազգ. գործերու բարեօր մատակարարութեան միակ պայմանն է Ազգ. Տուրքը:

ԽԱՌՆԱԿ ԿՍՏՈՒԹԻՒՆ

Չանչէն և Թրիքիւն կը ներկայացնեն քառանք: Առաջնորդ Սրբազանը Թրիքիւնէ վերջ պիտի երթայ նաև Չանչէ. ոսկայն փափաքելի և անհրաժեշտ է որ ամէն բանէ առաջ համաձայնութեան գետին մը ստեղծուի զանազան հոսանքներու մէջ:

ԱՐԱՐԱՅԻ ՏԱՐԵ ԴԱՐՁ

Ամսոյս 21 ին, Ո. Բ. Միւթեան Սրահին մէջ կատարուեցաւ Արարայի ճակատամարտի տարեգարձը:

Թիւնները բնականոն կը զտնան... Ահա մեր ալ այդ պարագաներու մէջ երբեմն ցոյց տուած «կենսաւեր» սովորութեանց տխուր աղբիւրը:

Սակայն ինչքան զարմանալի և որքան ողբալի երեւոյթ... մենք որ «ամէն ինչ» եւրոպական կամ ամերիկեան ըլլալ կը փնտռենք, անպայման պէ՛տք չէ որ անոնց միջոցներն ևս որդեգրենք:

Այ թրքական միջավայրէն դուրս կը գտնուինք տարիներէ ի վեր, ազգային խնդիրն ևս տարբեր պայմաններէ մէջ է, ալ չ'բռնալքի տեղի մնացած է...:

Հոսով յետոյ, այգորինակ նկարագրուին թերութեանց դէմ պարտինք սա ճշմարտութիւնը «Հայր-մեր» պէն քոց սովորի. «Ամէն պարագային, ըլլայ ազգային կամ անհատական, ԽՈՀԵՄՈՒԹԻՒՆԸ կը պահանջէ ՉԸՍԵԼ ԿԱՄ ՉԸՆԵԼ ամէն ինչ որ կրնանք ըսել կամ ընել մեր ամենայն տրի ջանքերէն ոյժի սպառումով»:

17/9/930

Մ. Պ. ՉԱՏԸՐՃԵԱՆ

ՅԱՌԱՋԻԿԱՅ ԹԻՒՈՎ

Արշաւիր Աղախանեանի գայթակղակի արարքը հայ որդեհի մը հոն գէպ:

* Նոր և զգայացունց յայտնութիւններ Մամիկէնի գրական և լայն հասարակութեանց մասին:

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԶԳ

ԲՐՈՒ. Ս. ԹԱՄԱՆԱՆ վերջնականապէս դադրած է «Լիբանան»-ի եւ վարչութեան հետ կապ ունենալէ, իր կողմէ կասարում կարգ մը գրամական գեղձարարութեանց համար գործաւորութեան ծրագրի պահ դրած էր մեր մօտ: Վարչութիւնն իր կողմէ կասարում գանձումներու համար ունէ պատասխանատւութիւն չըսանքներ:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՕՏԵԱՆ ՈՐԴԻ

Յայտարարութիւն

Ազգ. Սահակեան երկու վարժարանաց մէջ 1930—81 կրթ. տարեշրջանին՝ որպէս Տնօրէն, Ուսուցիչ և Ուսուցչուհի պաշտօնավարելու համար զիմով յարգոյ թեկնածուներուն ի գիտութիւն կուգանք ծանուցանել թէ՛ Խորհուրդս իր ընտրութիւնները ըրած և հրաւիրագրերը զրկած է պատկանեալներուն, որով, չստացողները ապառ կը մնան:

Աշակերտաց մուտքի արձանագրութիւնները կ'սկսին 25 Սեպտ. ին և կը տեւեն մինչև 15 Հոկտ., որմէ վերջ խիստ կարգադրութիւններ պիտի ըլլան:

Նախակրթարան և Մանկապարտէզը կը վերաբացուին ճիշդ Հոկտ. 1ին, իսկ կանոնաւոր դաստանգութիւնները կ'սկսին Հոկտ. 6ին:

ԹԱՂ. ԽՈՐՀՈՒՐԴ ՀԱՅՈՑ

ՎՐԱՆԱՔԱՂԱԲԻ

ՏԵՂ. ԼՈՒՐԵՐ

Ն. Վ. Ա. Տիպ փառա Կ'ազատուի արկածէ մը

Անցեալ հինգշաբթի երեկոյեան գամին մը բաղրած է Ն. Վ. Ատիպ փառայի ինքնաշարժին որ մեծապէս վնասուած է: Վարչապետը մի քանի թեթեւ վէրքեր միայն ստացած է:

Օգային ուղեւորութիւն

Յետ այսու Դամասկոս-Պաղատա օգային սպասարկութիւնը տեղի պիտի ունենայ փոխանակ երեքշաբթի չորեքշաբթի այս փոփոխութիւնը կատարուած է նաւային սպասարկութիւնները դիւրացնելու համար:

Գինեբու զեղջ ալ եղած է քիւն 80 էն 35 ի իշած Պէյրութ-Մարսէլ փոխադրութեանց համար:

Բ. Գոմիսի վերադարձը

Համաձայն ստացուած տեղեկութեանց Ն. Վ. Պ. Բոնսո պիտի վերադառնայ Հոկտեմբերին իսկ Պ. Սոյումիադի վերադարձի ժամանակը գեղ անորոշ է:

Պրումանայի Համագումարը

Կիրակի օր Պէյրութի Յրեսփոխան, Ապտալա Էլ Դէյուս հայկերոյթ մը տուած է որու ներկայ եղած են շատ մը երեսփոխաններ: Այս հաւաքոյթին քաղաքական բընոյթ կը վերադառնա. կը կարծուի թէ երեսփոխաններ կը ջանան կազմել ընդգրկող ճակատ մը:

Անգլ. Սպայ մը կորսուած

Անգլիական Բէմէն գրահաւորի սպաններէն կրէյ Ա. Բրիմա շաբաթ օր երեկոյեան Պուրճի պանդոկներէն սենեակ մը կը վարձէ քիչ վերջ պտոյտի մը համար պանդոկը կը թողու. կիրակի օր իր հիւրի բացակայութենէն մտահոգուած, պանդոկապետը կը գի մէ Ընդհ. Ապահովութեան Տնօրէնութեան օր Էրանանի և Սուրիոյ բուր քաղաքներուն մէջ փնտրողը կը կատարէ սպարդիւն կերպով:

ՄԻՇ. ԱՆ ԱՂԱԶԱՐԵԱՆ

ԲԱՑԱԾ Է ԻՐ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԵՋ

ԳԻՄԵԼ.— Mihran Aghazarian B. P. 606 Beyrouth

10—3

[Gr. Liban]

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Գերմանիոյ Գաղ. Կացութիւնը

Տնտեսական կուսակցութիւնը պահանջած է խորհրդարանի լուծումը:

Ժէն. Ասամս անուանուեցաւ բանակի վարչութեան պէտ Համբարայնի տեղ:

Եունկի ծրագրի վերաքննութեան Գերմանական դիտարկութեան մասին կառավարութիւնը հրատարակեց հերժում մը:

Փոքրամասնութեանց Խնդիրը

Ազգաժողովի Մէջ

Փոքրամասնութեանց շուրջ կասարում վիճարկութիւններու միջոցին Պ. Պ. Պրիան եւ Պէնէս յայտարարեցին թէ Փոքրամասնութեանց Խնդիրը արդար կերպով լուծուած է:

Եւրոպական Տէրութիւնները Մեպս. 23ին պիտի քննեն եւրոպական Դաւանակցութեան հարցը:

Չինաստան Կը Խաղաղի

Հիւսիսայիններու պետերը Մանչուիոյ կառավարչի կողմէ առաջարկուած զինադադարը ընդունած են:

Գերման Բրոքականս

Միացեալ Նահանգներու Մէջ

Ամերիկացի փաստաբան մը հաստատած է թէ համաշխարհային պատերազմի սկիզբը Միացեալ Նահանգներու ռազմաբեմի պայքարումը տեղի ունեցած է Գերմանական զգալի կազմակերպութեան մը կողմէ:

Քահանայ Մը Մահուան Դատապարտում

Թիխոմիրս եկեղեցւոյ պետէն Բէր Կոլմէյ մեծաբանակ դրամ եւ հարսարարութեան մթերք դիզած ըլլալուն պատճառաւ Մոսկովայի մէջ մահուան դատապարտուած է: Գրաւուած են իր գոյները:

Ժանտախտ Չինաստանի Մէջ

Մանչուիոյ հիւսիսային կողմը հարակած է ժանտախտ. հարիւրաւոր զոհեր կան: Վարակուած վայրեր գրկուած են հաղորդակցութեան: 1900էն ի վեր ամէն տարի համաճարակ կ'ըլլայ այս տրգանի մէջ:

Կարեւոր Գիւտ մը

Ամերիկացի գիտուն մը յայտնած է կասարկագործել բարձրաշափը. նոր գիտք հնարաւորութիւն կուտայ օդանաւորներու ներքին կերպով գիտնալու թէ քանի՞ մէք բարձրութեան վրայ կը գտնուին:

Երկուշաբթի օր, Կորուտեպը կը գտնուի Նաքարայի կողմերը տրեւհոր ու շուտաւ զիջուի մէջ:

Ողբերգական առեւանգում

Յուրէն էլ չ'ըզէջի Պշարա Թարէս անուն երիտասարդը իզուր կը ջանայ համոզել Գանիէլ Տիպը որպէսզի իր ազջիկը Աֆիֆէն իրեն տայ, Կիրակի օր Պշարա կ'առեւանգէ Աֆիֆէն և ապահով տեղ մը պահելէ վերջ, կը ներկայանայ անոր հօր ու կը խնդրէ իր ազջիկն ձեռքը. հայրը զայրացած ատրճանակով սրունքէն կը վիրաւորէ Պշարան, ստիպաններ կը հասնին, հայրը բանտ իսկ Պշարան հիւանդանոց կը փոխադրուին ուր քիչ վերջ կը հասնի Աֆիֆէն և հակառակ Պշարայի անհանգստութեան, Յուրէն չ'ըզէջի եկեղեցիէ մէջ կը կատարուի պսակի արարողութիւնը:

Պր. Պրիւէր Պէյրութի Մէջ

Դամասկոսի Բ. Գոմիսիութեան

Պատուիրակ Պր. Պրիւէր Պէյրութ եկած ու տեսակցած է Պր. Թէթրօի հետ:

Պատուիրակներու հրաւեր

Հոգատարեալ երկիրներու պատուիրակները Բ. Գոմիսիութեան կողմէ համագումարի հրաւեր ստացած են ամսոյս վերջը:

Համայնավար Բնութիւն

Ընդհ. Ապահովութեան Տնօրէն պր. Բէր լրացուցած ըլլալով ձերբակալուած համայնավարներու քննութիւնը. թղթադարձ յանձնած է Արդարութեան:

Հսկայ Կրկայ մը

Թունուղի կապէս քաղաքին մէջ բռնուած է հսկայ կրկայ մը որ ունի 650 քիւ. ծանրութիւն, 2 մէթր երկայնութիւն և 1.40 մէթր լայնութիւն:

(C. 111. 11. 11)